ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- հունվարի 2023 թվականի №---Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի հունվարի 9-ի №Ե-18-23 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Սարալանջի փողոցի 50/1 հասցեում գտնվող հողատարածքի՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին պատկանող՝ նույն համայնքի Սարալանջի փողոցի 41 հասցեում գտնվող հողատարածքի հետ փոխանակության գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունենալու վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Սարալանջի փողոցի 50/1 հասցեում գտնվող հողատարածքի՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին պատկանող՝ նույն համայնքի Սարալանջի փողոցի 41 հասցեում գտնվող հողատարածքի հետ փոխանակության գործարքի կնքմանը:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2023թ.